ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3
/շարունակություն/

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-ԲԴԽԳ-22/36» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 01.06.2022թ. ժամը 10-30-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վահագն Ասատրյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Հրաչ Արևշատյանը, Ռաֆայել Դավթյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

6. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

<<ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով, որի հիման վրա որոշեց՝

1. Հակադարձ աճուրդի արդյունքում ընթացակարգի՝ 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ << Ֆոտոն>> ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել ընտրված մասնակից:
2. <<ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի համաձայն:
3. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգի 1, 2, 3, 6, 7, 8 չափաբաժինները հայտարարել չկայացած:
4. "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
5. «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-ԲԴԽԳ-22/36» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Վահագն Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հրաչ Արևշատյան

_____ Ռաֆայել Դավթյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան